ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«_06_» _Հունիսի_2011թ N_54_

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ:

Ձեզ ենք ներկայացնում Ակնաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիս ամսին ընդունած որոշումները: Համայնքի ղեկավարի կողմից մայիս ամսին կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր 3 թերթ:

Ակնաշենի համայնքի ղեկավար՝ Մ.Միսակյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 5851-11
«07» 06 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06. Մայիսի 2011թ | թիվ 01Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009Թ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 01Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԹԻՎ 02Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2010 թվականի մարտի 22-ի թիվ 01/07.2/298-10 և 2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 01/07/1162-11 գրությունները:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի 2009թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 01Ա որոշման մեջ կատարելու հետևյալ փոփոխությունները:

1)Որոշմամբ հաստատված թիվ 01 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2010թվականի ապրիլի 9-ի «Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 05-ի որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին » թիվ 02Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսակյան

2011թվական
Մայիսի 06
գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 . Մայիսի 2011թ. թիվ 02 Ա

ՍԱՇԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախաղտումների վերաբերյալ օրենսգրքի 191 հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վաղարշապատի բաժնի 2011թվականի մայիսի 19-ի թիվ 88 4/196016 գրությունը, հրազենի պահպանման կանոնների խաղտման համար.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Համայնքի բնակիչ Սաշա Վաղարշակի Մանուկյանին հայտարարել նախազգուշացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսակյան

2011 թվական
մայիսի 26
գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31. մայիսի 2011թ. թիվ 03Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 01Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի երրորդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011թվականի ապրիլի 6-ի թիվ 01/12/1045-11 գրությունը և համայնքի ավագանու 2011թվականի մայիսի 31-ի թիվ 15 որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2009թվականի փետրվարի 5-ի թիվ 01 Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները:

1) Որոշմամբ հաստատված թիվ 06-Ա հավելվածում «Իրավունքներ և պարտականություններ» բաժինը լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«ժբ/ Սահմանված կարգով արձանագրում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը կազմում է համապատասխան եզրակացություններ և ներկայացնում է համայնքի ղեկավարին.

ժգ/ Սահմանված կարգով կազմակերպում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատանքներին առընչվող փաստաթղթաշրջանառությունը, համապատասխան գրանցամատյանների վարումը և դրանց պահպանումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Միսանյան

2011 թվական
մայիսի 31
գ. Ակնաշեն